

XX դարի ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

ՀՄՍՂ ԳԱ ակադեմիկոս էԴ. Մ. ԶՐԱՇՅԱՆ

Մարդկությունը մոտենում է XX դարի վերջին: Եվս մեկ տասնամյակ, և կավարտվի մեր բուռն, անհանգիստ, մեծ մղումներով ու հույսերով, հերոսական մաքառումով, բայց նաև ողբերգական հակառակություններով ու կորուստներով լեցուն դարը: Նրա հետ կավարտվի նաև մարդկության հետքերիստոնեական պատմության երկրորդ հաղարամյակը, և մենք ոտք կդնենք նոր՝ երրորդ հաղարամյակի նախաշեմին: Հիրավի մեծ տարեթիվ, որին ականատես կլինեն այսօր ապրող սերունդներից շատերը՝ նորհեյով այդ մասին, ակամայից հիշում ևս այն կրթոտ տողերը, որոնցով ավելի քան քսան տարի առաջ Պարույր Սևակը դիմում էր մեր դարին և նրա մարդուն.

Դու՝ քրսաներորդ և, անտարակույս, հոբելյանական,

Դու՝ հյուլեական,

Կարծես էական

Եվ ավելի քան կարծես բանական,

Բայց նաև նույնքան խելագար դարի

Ո՞վ քաղաքացիդ անգոր ու հզոր,

Անորոշության ցավով ևս հիվանդ,

Անորոշության անդաման ցավով...

Մոտեցող դարավերջը մեզ առիթ է տալիս խորհելու նաև XX դարում հայ ժողովրդի անցած պատմական ուղու մասին, հանրագումարի բերելու հոգևոր մշակույթի տարբեր բնագավառների հիմնական արդյունքները: Մասնավորապես, Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը արդեն այժմվանից ծրագրում է սկսել և մինչև դարի վերջը ավարտել մի մեծ աշխատություն (հավանաբար՝ բաղկացած երեք հատորից), որի մեջ պետք է վերլուծաբար ներկայացվի հարյուր տարվա ընթացքում հայ գրականության զարգացման համայնապատկերը:

Անհամար խնդիրներ են ծագում այդպիսի մի բարդ, նախկինում իր նըմանը չունեցած աշխատության բուն իսկ մտահղացման ընթացքում: Եվ ամենից առաջ այն հարցը, թե ի՞նչ ազգային յուրահատկություն ունի XX դարի գրականությունը, ինչ՞ով է կապվում և ինչ՞ով է առանձնանում համաշխարհային գրական ընթացքի մեջ: Ներկա հոդվածը նվիրված է այդ հարցին կամ, ավելի ճիշտ, նրա մի քանի կողմերին:

XX դարը հայ իրականության մեջ ևս սկսվեց մեծ հույսերով և սպասումներով: Այդ առումով շատ հետաքրքիր են դարամուտին հայ մամուլի էջերում հրապարակված մտորումներն ու կանխատեսումները: Օրինակ, «Մուրճ» ամսագիրը 1901 թ. հունվարին գրել է. «Կարելի է հավատալ, որ կամաց-կամաց կունենան մարդկանց բաժանող նախապաշարմունքներն ու մոլությունները, և համամարդկային բարօրության գաղափարը ժողովուրդների հասկացողությունների մեջ ժամանակի ընթացքում ավելի ընդարձակ գրավումներ կանեն»: Նոր սկսվող դարը «տենչանքների և հույսերի դար» էր

* Զեկուցում Հայագիտական հնաազոտությունների սիշազգային ընկերության շրջաօրհանում (Ֆրիբուրգ, Շվեյցարիա, հոկտեմբեր 1988 թ.):

1 «Մուրճ», 1901, № 1, էջ 9—10 («Մեր ընթերցողներին» հոդվածից):

անվանում «Մշակ» թերթը՝ հավատալով, որ այն «պետք է պատասխան տա մեր հասարակական հարցերին և լուծե մի շարք գործյան հանգույցներ»²։ Իսկ Վենետիկի «Բազմավեպը» դարամուտի իր խոսքն ավարտում էր այսպես. «Նոր գարու մուտքին մեջ մենք կզգանք կորովի, արիության, գիտության, բարեշրջման անհրաժեշտությունը. մենք կզգանք վերակենդանության պետքը...»³։

Այստեղ, անշուշտ, տեղը չէ անդրադառնալու այն հարցին, թե ի՞նչ տրվեց XX դարը հայ ժողովրդին։ Նշենք միայն, որ այս դարը մեր հազարամյակների պատմության մեջ կմտնի իբրև բացառիկ կարևոր ու բախտորոշ ժամանակաշրջան, որը երբեք չի ջնջվի հայ ժողովրդի հիշողությունից։ Ազգության գրեթե կեսի ֆիզիկական ոչնչացումը և մեր պատմական հայրենիքի մեծագույն մասի ողբալի կորուստը առաջին աշխարհամարտի և նրան հաջորդած տարիներին, աշխարհով մեկ տարածված սփյուռքի գոյացումը, որն ըստ երևույթին անդառնալի և անկասելի փաստ է այլևս մեր ժողովրդի ներկա և ապագա պատմության մեջ, բայց նաև դարերի ընդմիջումից հետո հայ պետականության վերականգնումը մեր պատմական հայրենիքի գեթ փոքր մի մասի վրա, — սրանք իրողություններ են, որ պետք է իրենց անմիջական կնիքը թողնեն մեր ժողովրդի կյանքի։ Հոգեբանության և ամբողջ մշակույթի վրա։ Նվ, իհարկե, առաջին հերթին գրականության վրա, որը ժողովրդի հոգևոր աշխարհի ամենից զգալուն և ամբողջական դրսևորման բընագավառն է։ Ահա այստեղից էլ բխում է XX դարի հայ գրականության ազգային յուրահատկության խնդիրը, որը պետք է լինի ապագա պատմության ելակետային դրույթներից մեկը և նրա էջերում գտնի իր բազմակողմանի հիմնավորումը։

Ամենից առաջ, XX դարը նախորդ հարյուրամյակից ժառանգեց և նշված պատմական հանգամանքների բերումով ավելի խորացրեց հայ գրականության երկնյուղ զարգացման իրողությունը։ Խոսքը վերաբերում է արևելահայ և արևմտահայ ճյուղերի առկայությանը, որը հոգևոր մշակույթի ընդլայնման և արևելահայերից ամենից ցայտուն երևան է եկել գրականության մեջ, քանի որ անմիջաբար կապված է ազգային լեզվի հանգամանքի հետ։ Ինչպես հայտնի է, հայ երրորդ գրական լեզուն՝ աշխարհաբարը, դեռ XVII դարից (գուցե և ավելի վաղ) ձևավորվեց երկու տարբերակով, որոնք շատ ընդհանրությունների հետ նաև որոշակիորեն զանազանվում են հնչյունական, քերականական և բառապաշարի մի շարք առանձնահատուկ գծերով։ Սակայն հայ գրականության բաժանումը երկու ճյուղերի (արևելահայ և արևմտահայ կամ, ինչպես անցյալում հաճախ ընդունված էր ասել՝ ուսահայ և տաճկահայ) պետք է համարել XIX դարի իրողություն։ Այսինքն այն ժամանակի, երբ աշխարհաբարը դարձավ նաև գրականության լեզու և սկսեց ձևավորվել հայ նոր գրականությունը, իբրև միջնադարի գրականությունից էապես տարբերվող նոր գեղարվեստական համակարգ։ Հազվագյուտ երևույթ է սա միջազգային գրականության մեջ և կապված է հայ ժողովրդի քաղաքական կյանքի իրադրության հետ։ Դա մեր նոր գրականության ակամա դժբախտությունն է թերևս, բայց նաև՝ նրա ներքին հարստության, բազմազանության աղբյուրներից մեկը։

Ազգային գրականության նոր փուլի սկիզբը կապվում է ոչ թե պատահական ու երկրորդական անունների, այլ որևէ նշանավոր, դարակաղմիկ դեր խաղացած ստեղծագործության երևան գալու հետ։ Այդ առումով մենք կարող ենք ճշգրտորեն ասել, որ արևելահայ գրականության հիմքը դրվեց Խ. Արսլանի «Վերք Հայաստանի» վեպով (գրված 1841 թ., թեև տպագրված և հասարակական լայն ճանաչում ստացած մոտ երկու տասնամյակ անց), իսկ արևմտահայ գրականությանը՝ Ղ. Ալիշանի «Նահապետի երգերով», որոնք հրապարակվեցին 1847 և հետագա մի քանի տարիներին։

² «Մշակ», 1901, № 1 («Փոսաներորդ դարի մուտքը» հոդվածից)։

³ «Բազմավեպ», 1901, № 1, էջ 5 (Ս. Նրեմյանի հոդվածից)։

XX դարն սկսվեց դրական զարգացման այնպիսի մի աստիճանում, երբ մեր գրականության և՛ արեւելահայ, և՛ արեւմտահայ ճյուղերն արդեն ձեռն-վորովել էին իրենց գեղարվեստական նկարագրի հիմնական գծերով և հասել էին ստեղծագործական լուրջ նվաճումների: Սակայն, ցավով ավելացնենք, առաջացել էր նաև փոխադարձ անըմբռնողության ու խորթության, փոխադարձ մեղադրանքների մի բավական մեծ բեռ: Այս առումով գրական և պատմահոգեբանական շատ արժեքավոր ու պերճախոս վավերաթուղթ է տաղանդավոր երգիծաբան Առանձարի հոգովածը («Մեր գրականության շուրջը»), որը հրապարակվել է 1903 թ. հունվարին «Մուրճ» ամսագրում: Արեւմտահայ գրողը ցավով էր արձանագրում այն իրողությունը, որ «փոքրաթիվ ազգի մը երկու մեծագույն հատվածները փոխադարձաբար անժանոթ կը մնան իրարու գրականության»: Ընդամին նա անվերապահորեն պնդում էր, որ «ռուսահայերն են այս ամօթալի երևույթին պատասխանատուն, քանի որ թուրքահայերը սկզբնի վեր մեծ հետաքրքրությամբ հետևած են ռուսահայ գրականության...», միշտ դրսևորելով «մեծ հարգանք ու համարում»⁴: Այնինչ արեւմտահայ գրականության նկատմամբ ռուսահայերի վերաբերմունքի մեջ Առանձարը տեսնում էր հետևողականորեն արտահայտված երեք մոմանտ՝ անտարբերություն, արհամարհանք և լեզվի տարբերություններից առաջացող անըմբռնողություն: Անշուշտ, կամա թե ակամա, երգիծաբանը խտացնում էր գույները, «վիրավորական» մոտեցում էր տեսնում նույնիսկ այնտեղ, ուր պարզապես պետք էր արձանագրել հայության երկու հատվածների և նրանց գրականության միջև զանազան պատճառներից ծնված փոխադարձ անըմբռնողականության և օտարման ցավալի երևույթը:

Առանձարի մտորումները անցյալում շատերին են հատուկ եղել: Ու բընավ չպետք է զարմանալ, որ «Հոսոսության» ու ճոռոմության որակումներին արեւմտահայ գրողներն էլ հաճախ, «ռեանշի հոգեբանության» թելադրանքով, հակադրել են իրենց հակափաստարկները արեւելահայ գրականության մեջ տեսնելով շատ «արատներ» և առաջին հերթին՝ պարզունակություն, մտքի և պատկերի հասարակացում. լեզվի օտարաբանություն և այլն: Նույն Առանձարը, օրինակ, գրում էր. «Պարզությունը՝ ինչպես ամեն բանի՝ այնպես էլ գրականության մեջ հանձնարարելի հատկություն մըն է և սակայն սոսկալի բան է լեզվի պարզությունը՝ կամ ավելի ճիշտ՝ բառով մերկությունը, զոր ռուսահայերը կը դավանին»: Արեւելահայ գրողների ոճի մեջ նա տեսնում էր բազմաթիվ մարտնչություն, արատներ. «Նշան սայլի պես դանդաղ ու ճոնշուն ոճ մը, ծանր ու միօրինակ համաձայնություն մը, նախադրություններու նախնական, անտաշ, անշնորհք շինվածք մը, արտահայտության անարվեստ, թափթփված ու գրեթե երեսխայական ձև մը և վերջապես այն ամբողջ արգահատելի հայերենը, որուն արհեստական գաղտնիքին թափանցելու համար պետք չէ հայերեն սորված ըլլալ»⁵:

Ավելացնենք, որ այս մտայնությունը հետագայում շատ ավելի խորացավ և իր գագաթնակետին հասավ Հակոբ Օշականի քննադատական ելույթներում: Ինչքան էլ շատերի կողմից բարձր գնահատվի վերջինիս գրականագիտական տաղանդը, չի կարելի չնկատել, որ նա իր գործունեությամբ ոչ միայն չի նպաստել մեր գրականության երկու հատվածների մերձեցմանը, այլև, ընդհակառակը, ձգտել է ամեն կերպ խորացնել նրանց հոգեբանական խզումը: Իսկ այդ փոխադարձ մեղադրանքներն ու խորթացումը հաճախ ցավագին դրսևորումների են հասել: Բավական է հիշել, օրինակ, դժգոհության այն բուռն ալիքը, որն առաջացավ Վահան Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ (1914) իր ժամանակի արեւմտահայ գրականության որոշ երևույթների (հատկապես այսպես կոչված «հեթանոսական ուղղություն») մասին ասված մի քանի աննպաստ խոսքերից: Դժգոհություն, որն

4 Առանձար. Մեր գրականության շուրջը.— «Մուրճ», 1903, № 1, էջ 39, 53:

5 «Մուրճ», 1903, № 1, էջ 51—52:

ղգալի շահով շարունակվում է մինչև այսօր. (և ոչ միայն սփյուռքահայ շրջաններում):

Այս բոլորով հանդերձ, XX դարում հայ դրականության դարգացման առաջավոր միտումներից մեկը պետք է համարել ոչ թե նրա երկու հատվածների խզումն ու խորթությունը, այլ ազգային-գաղափարական միասնության ձգտումը, որն իր համար ճանապարհ է հարթել հակառակ քաղաքական և գեղարվեստական կյանքի բոլոր աննպաստ պայմանների: Դեռ դարասկզբին հայ գրականության լավագույն գործիչները այդ միասնությունը համարում էին ազգային մշակույթի զարգացման անհրաժեշտ հիմք ու նախապայման: Հովհ. Թումանյանը մեր գրականության երկու ճյուղերի փոխադարձ վատ խմացությունը համարում էր «մի անբնական ու աննորմալ երևույթ, որ վերացնելու առանձին հոգ պետք է ունենանք»: Որովհետև, շարունակում էր լուսաստեղծը, միմյանց ավելի լավ ճանաչելու շնորհիվ միայն «մեր առջև կացվի ազգային հարստության մի նոր գանձարան, մեր դիմաց կհանեն մեծ ծանոթ, բայց ավելի շատ՝ անծանոթ տաղանդավոր գրողների դեմքեր, և մենք ավելի հարուստ, ավելի ուժեղ և ավելի հպարտ կզգանք մեզ»:

Ազգային գրականության ներքին միասնության հաստատումն ու ամրապնդումը շատ է մտահոգել նաև Ավ. Իսահակյանին, Ն. Չարենցին, Պ. Սեփակին և շատ ուրիշ նշանավոր դրական գործիչների: XX դարի հայ գրականության պատմությունը պետք է ցուցադրի հենց այդ միասնությունը՝ լուսաստեղծով, իհարկե, ոչ գաղափարական և ոչ էլ գեղարվեստական բնույթի ներքին տարբերությունները (երբեմն և հակասությունները):

Հայտնի է, որ գրականության պատմության կարևորագույն նախապայմանը նրա ճիշտ և հստակ պարբերացումն է, որը պետք է հենվի հասարակական պատմության և գեղարվեստական զարգացման օրինաչափությունների բազմակողմանի հաշվառման վրա: Անցած տարիներին մեզանում հայ սովետական գրականության պարբերացման բազմաթիվ փորձեր են արվել՝ հաճախ տրամագծորեն հակադիր և իրար ժխտող: Ընդամենը գրականագետները երբեմն իրենց պարբերացման հիմքում դրել են քաղաքացիական պատմության «միկրոշրջանները», երբեմն էլ ընդգրկել են շատ ավելի մեծ ժամանակահատվածներ: Սակայն, անկախ այդ փորձերի հաջողության աստիճանից, պետք է նկատի ունենալ, որ դրանք բոլորն էլ վերաբերել են միայն հայ սովետական գրականությանը և չեն ներառել մյուս գրական երևույթները, մասնավորապես սփյուռքը: Այնինչ այժմ մեր առջև կանգնած է ավելի լայն ու դժվարին մի խնդիր՝ առաջադրել մի այնպիսի պարբերացում, որն առավելագույն հարավորություն տա ներկայացնելու հարյուրամյակի ընթացքում ազգային գրականության զարգացման ամբողջական պատկերը՝ իր բոլոր մասերով, նրանց ներքին կապերով ու փոխհարաբերությամբ:

Մեզ թվում է, որ, ելնելով գրական-պատմական իրական ընթացքից, ճիշտ կլինի XX դարի հայ գրականության պատմությունը բաժանել երեք մեծ փուլի, որոնք իրարից բաժանվում են քաղաքական և գեղարվեստական զարգացման էական շրջադարձերով:

Նախ, առանձնանում են մեր դարի առաջին երկու տասնամյակները (1901—1920), երբ հայ ժողովրդի և նրա գրականության զարգացումն ընթանում էր նշված երկու ճյուղերով՝ հիմնականում ռուսական և օսմանյան հայրությունների սահմաններում: Դա մեր գրականության (և՛ արևելահայ, և՛ արևմտահայ) ամենաբարձր զարգացման շրջաններից մեկն էր, որն առերևույթ կարծեք թե չի համապատասխանում ազգային մասնատվածության, նդեռնի ու տնտեսական բայքայման պայմաններին: Բայց այստեղ, մեր խորին համոզմամբ, որևէ հակասություն չկա: Ազգային գրականության, ինչպես նաև արվեստի մյուս տեսակների բուռն զարգացումը դարասկզբին ժողովրդի հոգևոր ուժերի գերազույն լարման արդյունքն էր, ապրելու և հարատևելու կամ-

քի արտահայտություն, որը պետք է ուժ ներշնչեր ժողովրդին՝ ժամանակի արհավիրքներին դիմագրավելու համար:

Դարասկզբի հայ դրականությունը, որի քննությունը կկազմի ապագա աշխատության առաջին հատորի բովանդակությունը, աչքի է ընկնում գեղարվեստական միջոցների ու եղանակների (ուղղություններ և հոսանքներ, ոճեր և ժանրեր) աննախադեպ բազմազանությամբ: Այդ ամենի գիտական ուսումնասիրությունը և գնահատականը այսօր մեր գրականագիտության կարևոր և անհետաձգելի խնդիրներից է: Մանավանդ որ գիտական մտքի զարգացման այսօրվա աստիճանն ու պայմանները մեզ հնարավորություն են տալիս շատ ավելի մերձենալու պատմական ճշմարտությանը, քան երբեք նախկինում:

Վերցնենք, օրինակ, հայկական սիմվոլիզմի խնդիրը. որը մինչև այժմ բազմակողմանի քննության չի ենթարկվել, թեև դարասկզբի գրական պրոցեսում նրա նշանակալի տեղն ու դերը պարտավորեցնում են ավելի լրջորեն զբաղվել նրանով: Այնինչ մինչև այժմ մեր գրականագիտական աշխատանքներում հայկական սիմվոլիզմը մեծ մասամբ կա՛մ ամոթխածորեն լռության է մատնվել, կա՛մ փորձեր են արվել մի կերպ «արդարացնելու» նրա գոյությունը: Բայց գրականության պատմության իրական փաստերը թելադրում են այլ կերպ մոտենալ և ավելի լայնախոհ հայացքով քննել սիմվոլիզմի խնդիրը հայ գրականության մեջ: Զե՛ որ սիմվոլիզմի հետ մեծ կամ փոքր չափով և տարբեր ուղիներով առնչվել են մեր գրականության շատ նշանավոր դեմքեր՝ Լ. Շանթն ու Ավ. Ահարոնյանը, Սիամանթոն և Ինտրան, Մ. Մեծարենցը և Վ. Տերյանը, երիտասարդ Զարենցը և շատ ուրիշներ: Այս և մի շարք ուրիշ գրողների ժառանգությունը մենք ճիշտ հասկանալ և գնահատել չենք կարող՝ առանց հաշվի առնելու նրանց կապերը սիմվոլիզմի գեղագիտության և ստեղծագործական սկզբունքների հետ: Եվ այդ ամենը պետք է բացահայտել սիմվոլիզմի նկատմամբ նոր, ավելի օբյեկտիվ և արդարացի մոտեցմամբ, որն այժմ հաստատվում է մեր գրականագիտության մեջ:

Նույնը պետք է ասել դարասկզբի մյուս գրական հոսանքների մասին, ինչպես ռեալիզմն ու ռոմանտիզմը, նատուրալիզմն ու ֆուտուրիզմը, պրոլետարական գրական հոսանքը, որոնք ինքնատիպ դրսևորումներ գտան հայ գրականության մեջ: Վերջապես, անհրաժեշտ է պատմական օբյեկտիվության դիրքերից առանց միտումնավոր կերպով նսեմացնելու կամ արհեստականորեն գունազարդելու, վերագնահատել և պատմության մեջ տեղ տալ նաև այն գրողներին, որոնք մինչև այժմ իրենց քաղաքական դիրքորոշման պատճառով արհեստականորեն դուրս են հանվել գրական ընթացքի քննությունից: Խոսքը վերաբերում է այնպիսի հեղինակների, ինչպես Լ. Շանթը, Ն. Աղբալյանը, Ավ. Ահարոնյանը, Համաստեղը, Մուշեղ Իշխանը և ուրիշներ: Ազգային-քաղաքական կուսակցությունների հետ նրանց ունեցած առնչությունները այսօր այլևս չեն կարող արգելք լինել ճիշտ գնահատելու նրանց իրական դերը հայ գրականության պատմության մեջ:

Գրական զարգացման երկրորդ փուլն սկսվում է 1920 թվականից ու տեղում է մոտ քառասուն տարի՝ մինչև 1950-ական թթ. վերջը: 1920 թվականը Հայաստանում նոր, սովետական իրավակարգի հաստատման, միաժամանակ նաև հայ գրականության նոր փուլի սկզբնավորման տարեթիվն է: Առաջացավ և իր զարգացման ուղին սկսեց հայ սովետական գրականությունը: Միաժամանակ գոյացավ նաև այնպիսի մի ինքնատիպ ու բարդ երևույթ, որպիսին է սփյուռքահայ գրականությունը: Իհարկե, նախկինում էլ՝ սկսած միջին դարերից, հայ գրականության շատ գործիչների վիճակվել է ապրել և ստեղծագործել օտար ափերում՝ Մերձավոր արևելքից մինչև Լեհաստան, Վենետիկից մինչև Կալկաթա: Դրանք եղել են հայ գրականության բեկորներ՝ ճակատագրի բերումով ցրված տարբեր աշխարհամասեր, մի բան, որ կարելի է նկատել շատ ազգային գրականությունների տարեգրության մեջ: Սակայն տվյալ դեպքում խոսքը ոչ թե առանձին գրական երևույթների մասին է, այլ ամբողջական և ինքնուրույն գեղարվեստական համակարգի:

Հայ սովետական գրականության պատմությանը, մասամբ նաև սփյուռքի գրական զարգացմանը քիչ աշխատություններ չեն նվիրվել: Բայց այժմ մեր

առջև շատ ավելի բարդ և տարողունակ խնդիր է կանգնած: Անհրաժեշտ է ոչ միայն նորովի կարգալ և մեկնաբանել հետհոկտեմբերյան գրականության շատ էջեր, այլև միասնական պատմության մեջ ներառել նաև մեր ժողովրդի գրականության բոլոր մյուս արժեքավոր դրսևորումները աշխարհով մեկ տարածված սփյուռքում: Ընդամին հասկանալի է, որ ամենևին ընդունելի չի կարող լինել հայ սովետական և սփյուռքի գրականության արհեստական միաձուլումը, նրանց որակական գծերի անտեսումը: Չէ՞ որ մեկ և մյուս դեպքում երևան են գալիս տարբեր գաղափարական ազդակներ, տարբեր կենսական ու գեղարվեստական միջավայր, որոնք և պայմանավորում են այդ գրականությունների զարգացումը: Սակայն միաժամանակ չի կարելի նաև մեր գրականության պատմությունը շարադրել նրա երկու հատվածների ուղղագիծ հակադրման սկզբունքով, պետք է ցույց տալ նրանց ներքին կապերն ու միասնությունը, որ հանդես են գալիս նաև այս դեպքում՝ շնայած գրողներին բաժանող վիթխարի տարածությանն ու թեմատիկ-գաղափարական տարբերություններին: Այդ միասնության հիմքը ժողովրդի ոգու և պատմության կապերն են, ազգային գեղարվեստական ավանդույթների ընդհանրությունները, մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի նկատմամբ որդիական սերն ու կարոտը, որ եղել են սփյուռքի գրականության առաջատար գաղափարական-զգացմունքային գծերը սկզբից մինչև այսօր:

Անհրաժեշտ է ավելի հստակ գիտական բացատրություն տալ այն հարցին, թե ի՞նչ է իրենից ներկայացնում սփյուռքահայ գրականությունը: Երբեմն այն դիտվել է իբրև արևմտահայ գրականության ուղղակի ժառանգորդն ու շարունակությունը՝ նոր պատմական հանգամանքներում: Զգալի չափով դա իրավացի է սփյուռքի գրականության առաջին տասնամյակների (1920—30-ական թթ.) նկատմամբ, երբ դեռ կենդանի էին և գործում էին արևմտահայ գրականության «վերջին մոհիկանները»՝ Ա. Զուպանյանը, Լ. Շանթը, Ե. Օտյանը, Վ. Թեքեյանը և ուրիշներ, երբ սփյուռքի գրողների ստեղծագործության մեջ գերակշռում էին կորցրած հայրենիքի կյանքի և կարոտի մոտիվները: Սակայն սկզբից ևեթ՝ առաջին աշխարհամարտից անմիջապես հետո, սփյուռքի գրականությունն արդեն որակապես նոր երևույթ էր: Դա իր ավանդական հայրենիքը կորցրած և աշխարհով մեկ ցրված ազգային զանգվածների կենսապայմանների և հոգևոր մղումների գեղարվեստական պատկերն էր՝ այստեղից բխող բոլոր ստեղծագործական հետևանքներով:

1920-ական թթ. առաջացան սփյուռքահայ գրականության մի քանի հիմնական օջախներ՝ մերձավորարևելյան, ֆրանսահայ, ամերիկահայ, իրանահայ և այլն, որոնցից ամեն մեկն էլ, շնայած ներքին բազմազան կապերին և փոխանցումներին, ունի իր որոշակի յուրահատկությունները: Այդ գրական օջախների և ընդհանրապես սփյուռքահայ գրականության մասին Հայաստանում և արտասահմանում քիչ չի գրվել: Բայց ներկայացնել հայ գրականությունը իր «բնաշխարհիկ» և «տարաշխարհիկ» թևերով միասին, «մեկ հարկի տակ», — սա մի խնդիր է, որն իրականացվելու է առաջին անգամ: Սփյուռքի առաջացումից հետո հայ գրականությունն արդեն զարգանում է ոչ թե երկու հարևան պետությունների պահանջներում, այլ աշխարհի այն բոլոր գոտիներում, ուր հայեր են բնակվում, — և այդ ազգային յուրահատկությունը պետք է արտացոլվի XX դարի հայ գրականության պատմության մեջ:

Վերջապես, այդ պատմության երրորդ մեծ փուլն սկսվում է 60-ական թվականներից և շարունակվում է մինչև մեր օրերը: Այդ փուլին բնորոշ հատկանիշները, կարծում ենք, կհարատևեն նաև մինչև դարավերջ:

Ի՞նչ հիման վրա է առանձնացվում այդ նոր փուլը, ինչո՞ւ է այն տարբերվում նախորդից: Այստեղ որոշիչ դեր խաղացին 50-ական թթ. վերջին կուսակցության XX համագումարից հետո սովետական հասարակության մեջ կատարված հայտնի փոփոխությունները, որոնք, բնականաբար, իրենց խոր կնիքը դրեցին նաև գրականության վրա: Բայց դրա հետ մեկտեղ շատ կաշտեր է նշել «Հայրենիք—Սփյուռք» փոխհարաբերության մեջ կատարված

դգալի տեղաշարժերը: Բանն այն է, որ նախորդ փուլում (1920—50-ական թթ.) հայ գրականության սովետական և սփյուռքի հատվածները զարգանում էին մեծ մասամբ մեկուսացած, առանձին: Պատճառը հանրահայտ է: Տարբեր քաղաքական համակարգ ունեցող պետությունների միջև այդ տարիներին տիրապետող թշնամական հարաբերությունները խիստ սահմանափակում էին գրական-գեղարվեստական արժեքների փոխանակության հնարավորությունները, կոնտակտները, կապերը: Դա արտահայտվում էր նաև հայ գրականության, նրա տարբեր մասերի առնչությունների մեջ, որոնք հասցված էին նվազագույնի:

Այնինչ 1950-ական թթ. վերջից վիճակն էապես փոխվեց, ուժեղացան փոխադարձ կապերը, այսպես ասած՝ ստեղծագործական ինտեգրացիան: Լայն ծավալ ստացավ սփյուռքահայ գրողների հրատարակության և ուսումնասիրման գործը Հայաստանում: Խորացավ և ամրապնդվեց հայ գրականության ազգային միասնականության դրույթը, որը նախորդ փուլում չէր կարող լայն ճանաչում գտնել աշխարհում տիրող գաղափարական անհաշտ հակամարտության պատճառով: Ծիշտ է, վերջին տասնամյակներում հայ գրականության «քարտեզը» զնայով ավելի ու ավելի ցրվ է դառնում, գրական ուժեր և հրատարակություններ են երևան գալիս աշխարհի նորանոր ծայրերում: Սակայն դրա հետ միասին շատ ավելի լայնորեն, քան նախորդ փուլերում, քաղաքացիություն է ստանում «մեկ ազգ—մեկ գրականություն» լիզբունքը: Չնայած աշխարհագրական մեծ մասնատվածությանը և տարբեր-թաց միտումներին, հայ գրականությունը որոշ իմաստով մնում է իբրև ազգային-գեղարվեստական միասնական երևույթ: Բացատրենք այս միտքն ավելի հանգամանորեն:

Այն ինքնատիպ իրադրությունը, որ հայ գրականության մեջ գոյացել է և զնայով խորանում է այսօր՝ XX դարի վերջին, էապես տարբերվում է համաշխարհային գրականության մեջ հայտնի ուրիշ համանման երևույթներից: Հայտնի է, օրինակ, որ անգլերեն լեզվի լայն տարածման շնորհիվ տարբեր աշխարհամասերում գոյացել են մի շարք ինքնուրույն գրականություններ, ինչպես ամերիկյան, կանադական, ավստրալիական և այլն: Նույնիսկ նախկին բրիտանական գաղութներում ասիական և աֆրիկյան որոշ ժողովուրդների գրականությունը երկար ժամանակ ստեղծվել է և այժմ էլ ստեղծվում է անգլերեն: Սակայն այդ գրականությունները, անշուշտ, չեն մտնում բուն անգլիական գրականության պատմության մեջ, ինչպես որ Լատինական Ամերիկայի իսպանախոս ժողովուրդների գրականությունը չի կարող համարվել իսպանական գրականության մի մասը: Դրանք ինքնուրույն գեղարվեստական միավորներ են: Այնինչ հայ գրականության հանգամանքը բոլորովին այլ բնույթ ունի: Հայագիր, բայց ոչ հայ գրականություն չկա և չի կարող պատկերացվել, քանի որ արտասահմանում (ինչպես նաև Սովետական Միությունում) Հայկական Հանրապետությունից դուրս հայաշատ վայրերում) ո՛չ հայկական ինքնուրույն պետական միավորումներ և ո՛չ էլ նոր ազգային ամբողջություն չեն գոյացել և հազիվ թե երբևէ գոյանան: Ազգային նկարագիրն ու լեզուն հայկական սփյուռքում կարող են պահպանվել այնքան ժամանակ, քանի դեռ մարդիկ իրենց գիտակցում են իբրև հայ ժողովրդի ազգային ամբողջության մի մասնիկ՝ գեթ հոգեբանորեն կապված մայր հայրենիքի հետ: Հետևաբար, մեր գաղութների գրականությունն էլ մնում է հայ գրականության մի մասը և չի կարող համարվել ինքնուրույն և առանձին գեղարվեստական երևույթ: Ահա թե ինչու մենք ոչ միայն իրավունք ունենք, այլև պարտավոր ենք XX դարի հայ գրականության պատմության մեջ լայնորեն ներառնել այդ ցրված գրական ջոկատները, որոնք միա-ին կուլվում են սփյուռքի հայ գրականություն:

Այս կապակցությամբ պետք է առանձին քննության առարկա դառնա նաև արտասահմանի օտարագիր հայ հեղինակների ազգային պատկանելության խնդիրը: Իհարկե, միայն գրողի հայկական ծագման հանգամանքը դեռ իմք չի տալիս նրա ստեղծագործությունը հայ գրականության պատմության

մեջ ներառնելու համար: Այդ իմաստով այնպիսի հայազգի օտարազգի հեղինակներ, ինչպես Արթուր Ադամովը կամ Անրի Թրուայան, կապ չունեն հայ գրականության հետ (նույնը վերաբերում է Սովետական Միությունում հայ գրողի այն հայազգի գրողներին, որոնք ստեղծագործում են ռուսերեն): Սակայն լավ հայտնի է, որ արտասահմանում անգլերեն, ֆրանսերեն կամ իսպաներեն գրող մի շարք հայազգի հեղինակներ շարունակել են պահպանել և՛ հայկական թեմատիկան, և՛ ազգային հոգեբանության ու վերաբերմունքի կարևորագույն գծերը: Դա, առաջին հերթին, վերաբերում է Վիլյամ Սարոյանին, գոնե նրա ստեղծագործության մի զգալի մասին: Նույնը կարելի է ասել այնպիսի գրողների վերաբերյալ, ինչպես Լևոն Սյուրմելյանը, Վահե Բալան, Մայքլ Աուլենը, Ալիսիա Կիրակոսյանը և ուրիշներ:

Ինչպե՞ս վարվել այս և նման հեղինակների հետ, արդյոք մենք իրավունք ունենք նրանց ներգրավելու XX դարի հայ գրականության համայնապատկերի մեջ: Այս հարցին կարելի է դրականորեն պատասխանել, բայց անհրաժեշտ վերապահություններով. պետք է լրիվ հաշվի առնվեն այդ գրողների ազգային դիմագծի յուրահատկությունները, ըստ ամենայնի պետք է բացահայտվեն նրանց ստեղծագործության «հայկական տարրերը», և, իհարկե, օտարազգի հեղինակները պետք է առանձնացվեն իբրև հատուկ գեղարվեստական ֆենոմեն:

Ժամանակակից հայ գրականության ազգային յուրահատկության կարևորագույն կողմերից մեկը առաջվա նման մնում է լեզվական ինքնատիպ իրադրությունը: Հայաստանում և ընդհանրապես Սովետական Միությունում հայ գրողներն ստեղծագործում են արևելահայ լեզվով, նույնիսկ նրանք, ովքեր ավելի վաղ՝ արտասահմանում եղել են արևմտահայ լեզվի կրողներ: Այնինչ սփյուռքը, բացի իրանահայ գաղութից, հետևում է արևմտահայ լեզվին, թեև այստեղ էլ արդեն չի պահպանվում նախկին միատարրությունը: Այսօր արևելահայ լեզվով գրողներ կան նաև ուրիշ գաղթօջախներում. դրանք իրանից կամ Հայաստանից տեղափոխված, ինչպես նաև հայրենիքում կրթություն ստացած հեղինակներն են: Չնայած այդ հանգամանքին, մենք ո՛չ հնարավոր և ո՛չ էլ ցանկալի պիտի համարենք արևելահայերենի համատարած տիրապետությունը սփյուռքում, ինչպես երբեմն ոմանք անհեռատեսորեն առաջարկում են: Արևմտահայերենը կպահպանվի և պետք է պահպանվի իբրև ոչ միայն խոսակցական, այլև գրականության լեզու: Դա հայ ժողովրդի և նրա գրականության պատմական յուրահատկությունն է, նաև նրա հարստությունը, որից չպետք է հրաժարվել:

Հայ ժողովրդի տարբեր հատվածների կուլտուրական մերձեցմանը էապես խանգարող ցավոտ գործոն է մնում ուղղագրության խնդիրը, որն զգալի տարբերություններ ունի հայրենիքում և սփյուռքում: Ավելորդ է ասել, թե դա ինչքան կարևոր հանգամանք է նաև գրականության ճակատագրի համար: Եթե հարցին նայենք իրատես հայացքով, ապա պետք է խոստովանենք, այսօր ոչ հնարավոր է, որ սփյուռքն ընդունի մեր նոր ուղղագրությունը և ոչ էլ այն, որ Հայաստանում վերադառնան գրաբարյան ուղղագրության սկզբունքներին: Կավագույնը կլինի այն, որ Հայաստանի և սփյուռքի հեղինակավոր և, իհարկե, լայն լիազորություններով օժտված ներկայացուցիչները համատեղ մշակեն միասնական ուղղագրության սկզբունքներ: Դրանք պետք է կառուցվեն փոխզիջման և մերձեցման հիմունքով, ընդունելի ու պարտադիր լինեն բովանդակ հայության համար: Բայց սա արդեն առանձին մեծ խնդիր է, որը լուրջ քննություն է պահանջում:

Այսպես է ներկայանում մեզ XX դարի հայ գրականությունը իր զարգացման ողջ ընթացքի մեջ՝ ներքուստ երկփեղկված և նույնիսկ բաղմամբեղկված, բայց և միասնական: Իսկ թե ինչպիսին կլինեն նրա բաղադրամասերի վերլուծության ծավալն ու չափերը, ապա հիմնական սկզբունքը պետք է հետևյալը լինի. գրական բաղմամբան երևութները պատմության մեջ տեղ կգրավեն այն չափով, որը համապատասխանում է նրանց գեղարվեստական արժեքին, ժողովրդի հոգևոր կյանքում նրանց ունեցած նշանակու-

թյանը: Դարավերջի բարձունքից մենք պետք է կարողանանք դատել իսկական գեղարվեստական մեծությունը արտաքին կեղծ փայլից, պատեհապաշտ նկատառումներով ստեղծված երկերից, որոնք վաղ թե ուշ խամրում են, կորցնում իրենց նշանակությունը: Ըստ այդմ էլ պետք է որոշվի պատմության մեջ նրանց հատկացվող տեղն ու գնահատականը:

Այստեղ հնարավոր չէ անդրադառնալ ապագա աշխատության կառուցվածքի և բովանդակության բոլոր կողմերին, մանավանդ որ շատ բան կը պարզվի ու կճշտվի բուն աշխատանքի ընթացքում: Ասենք միայն, որ պատմության երկրորդ և երրորդ փուլերում գերակշիռ տեղը, անշուշտ, պատկանելու է հայ սովետական գրականությանը, քանի որ այստեղ է կենտրոնացված մեր ժողովրդի նորագույն գրական-գեղարվեստական նվաճումների մեծագույն մասը: Այս կապակցությամբ, բնականաբար, ծագում է նաև սովետական շրջանի հայ գրականության ներքին ստորաբաժանումների (կամ պարբերացման) խնդիրը, բացի այն երկու մեծ փուլերից, որոնց մասին արեն խոսվեց: Նույնը վերաբերում է նաև սփյուռքի գրականությանը: Ավելացնենք, որ ներքին պարբերացումը, որը որևէ երևույթի գիտական պատմության անհրաժեշտ նախապայմանն է, երբեմն կարող է նույնը չլինել սովետահայ և սփյուռքի գրականության համար, քանի որ նրանցից յուրաքանչյուրն ունի զարգացման իր ներքին տրամաբանությունը՝ կապված քաղաքացիական պատմության և գեղարվեստական կյանքի կոնկրետ հանգամանքների հետ: Ժամանակակից հայ գրականության երկու ճյուղերի պատմությունն, ըստ երևույթին, ճիշտ կլինի շարադրել ոչ թե միախառնված, այլ զուգահեռաբար, կողք-կողքի: Կարևորն այն է, որ միշտ հիշվեն և նկատի առնվեն հայ գրականության ազգային ամբողջականությունը, նրա մասերի ներքին կապերն ու փոխազդեցությունը:

Մարդկությունը մոտենում է XX դարի վերջին բազմաթիվ կնճոռոտ և չլուծված հարցերով, ողբերգական կորուստներով, բայց և ավելի իմաստնացած, դեպքերի զարգացման կործանիչ ընթացքը կանխելու վճռականությամբ առգործված: Ժողովուրդների գիտակցության մեջ ավելի ու ավելի է հաստատվում այն համոզմունքը, որ դասակարգային և ազգային շահերից ավելի բարձր և առաջնային են համամարդկային շահերը, հասարակության բարոյական կատարելագործման, մարդկությանը վերահաս ոչնչացման վտանգից փրկելու խնդիրը: Այդ նոր մտածողությունը, ժողովուրդների մերձեցման և համագործակցության նոր առաքելական հնարավորությունն են տալիս նաև նորովի ընթերցել ու վերագնահատել ազգային գրականության սլաշաճությունը, վեր հանել այն արժեքները, որոնք համահնչուն են մեր ժամանակի և մարդկության լավագույն ձգտումների հետ: XX դարի հայ գրականության պատմությունը պետք է ստեղծվի այդ դիրքերից, և դա հնարավորություն կտա շեշտափելիորեն ցուցադրելու, թե մեր ժողովուրդն ինչպես է անցել այս փոթորկոտ դարի միջով. ինչպես է մասնակցել մարդկության հոգևոր առաջադիմության մեծ գործին:

О НАЦИОНАЛЬНОЙ СПЕЦИФИКЕ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ XX ВЕКА

Академик АН АрмССР Э. М. ДЖРБАШЯН

Резюме

Отличительные качества армянской литературы XX века являются прямым отражением исторических судеб нашего народа. В начале века она по-прежнему развивалась двумя ветвями (восточная и западная), соответственно в пределах Российской и Османской империй. При внутреннем единстве восточноармянская и западноармянская ветви армянской литературы заметно отличаются по языку, по тематическим и художественным особенностям. В послереволюционное время в армянской литературе образовались новые самостоятельные идейно-художественные системы: с одной стороны, армянская советская литература, с другой—литература армянской диаспоры. Появляются армянские писатели, пишущие на английском, французском, испанском языках. Но при всем этом армянская литература XX века должна рассматриваться как единое целое, ибо ведущей ее тенденцией было и остается сознание национально-го единства, чувство причастности к матери-родине. В статье предлагается выделить в истории армянской литературы XX века три основных периода—начало века, 20—50-ые годы и с 60-х годов до конца века. Каждый из этих периодов должен стать предметом отдельного тома в коллективном труде «История армянской литературы XX века», к созданию которого в скором будущем приступит Институт литературы им. М. Абегяна АН АрмССР. В основе статьи лежит доклад на четвертой конференции Международной ассоциации арменоведческих исследований в швейцарском городе Фрибуре в октябре 1988 г.